

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Փարիսա Հասանի Փորձնորդական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐՍՈՒԾԱԾ ԽԵՑԵՂԵԼԸ
IX-XIV ԴԱՐԵՐՈՒՄ**

Է. 00. 03. «Հնագիտություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2015

**ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

Париса Хасановна Пормохаммеди

**ПРИВОЗНАЯ КЕРАМИКА АРМЕНИИ
(IX –XIV ВВ.)**

А В Т О Р Е Ф Е Р А Т

диссертации на соискание ученой степени
кандидата исторических наук по специальности
07.00.03 – “Археология”

ЕРЕВАН – 2015

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների թեկնածու՝

Ա.Ս. Ժամկոչյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝

Հ.Լ. Պետրոսյան

պատմական գիտությունների թեկնածու՝

Ա. Լ. Ջոհրաբյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի պատմության թանգարան


Պաշտպանությունը կայանալու է 2015 թ. դեկտեմբերի 1-ին, ժամը 14:00-ին, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի հնագիտության և ազգագրության 007 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ Երևան-0025, Չարենցի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարանում:

Սելմագիրն առաքված է 2015 թ. հոկտեմբերի 30-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

պատմական գիտությունների թեկնածու



Յ.Ա. Սելքոնյան

Тема диссертации утверждена на заседании ученого совета Института археологии и этнографии НАН Республики Армения

Научный руководитель:

кандидат исторических наук

А.С. Жамкочян

Официальные оппоненты:

доктор исторических наук, профессор

Г. Л. Петросян

кандидат исторических наук

А. Л. Зограбян

Ведущая организация: Музей истории Армении

Защита состоится 1-ого декабря 2015г. в 14:00 часов, на заседании специализированного совета 007 ВАК по археологии и этнографии, при Институте археологии и этнографии НАН РА (адрес: Ереван 0025, ул. Чаренца 15).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института археологии и этнографии НАН РА

Автореферат разослан 30-ого октября 2015 г.

Ученый секретарь специализированного совета

кандидат исторических наук



У.А. Мелконян

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը:

Թեմայի արդիականությունը: Ատենախոսությունը նվիրված է միջնադարյան Հայաստանի առևտրա-տնտեսական կյանքի բնագավառներից մեկին՝ խեցեգործությանը և արյուրագիտական որոշակի արժեք է ներկայացնում տարածաշրջանի այլ երկրների հետ Հայաստանի քաղաքական, սոցիալ-տնտեսական, առևտրական, դիվանագիտական, նյութական ու հոգևոր մշակույթի, ինչպես և դրամական շրջանառության ոլորտներն ուսումնասիրելու համար: Հիմք ընդունելով հայ պատմագրության ժամանակագրական պարբերացունը՝ IX-X, XII-XIII, XIII դ. II կես XIV դարեր, աշխատանքը հետազոտված է հետևյալ հիմնախնդիրների բացահայտումով:

1) IX- XIV դարերի Հայաստանի և տարածաշրջանի այլ երկրների խեցեղենը ուսումնասիրված է որպես ա) արհեստագործական արտադրանք, բ) միջազգային շուկաներում ապրանքաշրջանառության և առևտրի առարկա, գ) կիրառական արվեստի արժեքային սուբյեկտ:

2) Ներմուծած խեցեղենը, քննարկելով պատմական միջավայրի կոնտեքստում, հիմնավորված են երբեմնի ընդհատումներով կամ զանգվածային ծավալներով այն Հայաստան ներկրելու հանգամանքները: Հայաստանի հնագիտական հուշարձանների պեղումների արդյունքները, քննելով տնտեսական և առևտրական քաղաքականության հարաբերությունների տեսանկյունով, համակողմանիորեն՝ ըստ պատմափուլերի վերլուծված է մոտակա և հեռակա երկրների հետ Հայաստանի արտաքին կապերի հիմնական ուղղությունները, գործառնության ակտիվ կամ պասիվ երթևեկի դրսևորումներով:

3) Առևտրական ճանապարհների վերաբերյալ գրավոր վավերագրերը հնագիտական նյութի և շրջանառվող գրականության համատեքստի քննարկումով, լուսաբանված են Հայաստան ներկրված խեցեղենի հիմնական տեսակները, ի մի են բերված Մերձավոր, Միջին և Հեռավոր երկրների խեցեգործական աշխատանոցների տեղակայումները, ընդհանրացված են դրանց արտադրական կարողությունների ծավալները, տեխնոլոգիական ձեռքբերումների լծակները, որակական հատկանիշները և խնդրո առարկայի հետ կապված պատմա-մշակութային շատ այլ հիմնախնդիրներ: Տեղական ու ներմուծած խեցեղենի ստորաբաժանումը, որ հնագիտության առանցքային ու խնդրահարույց պրոբլեմներից մեկն է, աստենախոսության մեջ ներկայացված է փաստացի հենքով և դրանից բխող եզրակացություններով:

4) Հնագույն ժամանակներից «Մետաքսի ճանապարհի» գործակցության ակտիվ մասնակիցը լինելով, Հայաստանը միաժամանակ համարվել է Արևելք-Արևմուտք հարաբերությունները կամրջող օղակներից մեկը: Վերջին տարիներին աշխույժ գործածության մեջ մտած «Մետաքսի ճանապարհ» արտահայտությունը համաշխարհային գլոբալացման բնորոշ դրսևորումներից է և վերածվել է տարբեր երկրների աշխարհագրական դիրքի, ստրատեգիական ու ընդերքի ռեսուրսների մաքսիմալ հնարավորությունները շահագործելու աշխարհաքաղաքական մի հասկացության: Այդ կողմնորոշումներով արդարացվում է ժամանակակից հզոր տերությունների: ա) Ռուսաստան, Չինաստան, Իրան և բ) ԱՄՆ, Աֆղանստան, Ադրբեջան, Թուրքիա խմբավորումների քաղաքականության գոյակցությունը:

Միջնադարում առաջադիմության ձգվող զանազան ազգերին այդ ճանապարհը կապել է Դեռավոր Արևելքի հնագույն քաղաքակրթության օջախ՝ Չինաստանի հետ և մշակութային արժեքները ելման այդ կետից Կենտրոնական Ասիայով հասնում էին Փոքր Ասիա, Կովկաս, Եվրոպա: Ընթացքում մայրուղու ցանցում կենտրոնացված երկրները հաղորդակցվում էին քաղաքակրթության նվաճումներին և միմյանց փոխանցելով մշակութային արժեքների գաղտնիքները, մեծապես նպաստում այդ ասպարեզների նոր ձեռքբերումներին:

Թեման շարադրված է Հայաստանի և այլ երկրների հնագիտական պեղումներից հայտնաբերված խեցեղենի փաստագրական հիմքով և ժամանակագրական հաջորդականությամբ: Խեցեղենը մշտապես համարվել է մշակութային կարևոր արժեք և ատենախոսության մեջ նյութի տեսակավորումը և տարածաշրջանի այլ երկրների պատկանելիության վերլուծությունը շոշափում է «Սետաքսի ճանապարհին» տեղակայված երկրների Չինաստանի, Իրանի, Իրաքի, Սիրիայի, Կենտրոնական Ասիայի և Կովկասյան երկրների առևտրա-մշակութային կապերի դինամիկան, ուստի այդ տեսանկյունով ուսումնասիրությունը արդիական է:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակն եղել է պատմական աղբյուրների, վիճագրական տվյալների, հնագիտական և պատմա-մշակութային ժառանգության տվյալների համապարփակ քննությամբ լուսաբանել միջնադարյան պատմության որոշակի փուլերում Հայաստանի, Մերձավոր և Դեռավոր Արևելքի տնտեսական ու առևտրական քաղաքականության բնագավառում տեղի ունեցող շրջադարձերը, որոնք արհեստագործության զարգացման գործընթացներում ունեցել են յուրովի դրսևորումներ: Աշխատանքը նպատակաուղղված էր նաև խեցեղեն մշակույթի նվաճումների ցուցմունքով վերլուծել տնտեսական այդ քաղաքականությունը, ամրապնդել յուրաքանչյուր երկրի քաղաքակրթական ավանդը՝ ընդգծելով տեխնոլոգիական նորարարությունները միմյանց փոխանցելու փորձառությունը և դրանց հետ կապված ուշագրավ շատ այլ հարցեր: Այդ առումով հնագիտական նյութը քննության է ենթարկված պատրաստման հնարների, խեցատի բաղադրության որակի, արտաքին ձևերի առանձնահատկությունների համատեքստով, շարադրանքում ներառելով պատմական աղբյուրների, վիճագրական տվյալների և օժանդակ այլ դիսցիպլինների տվյալները: Այդ հիմնավորումներով ներմուծած խեցեղենը ժամանակագրական ու տեսակավորման հենքով համակարգված է և ներկայացված խեցեգործական արտադրանքին բնորոշ տիպական սանդղակով: Այդ բնագավառի ուսումնասիրությունը նախկինում էական նվաճումներ էր արձանագրել, սակայն վերջին տարիների պեղումների ու արդի գրականության նորույթներն առաջադրում են խնդիրը քննել գիտական նոր փաստարկներով: Այլ երկրների հետ Հայաստանի տնտեսական ու մշակութային շփումները ընդհանրացնում էին որոշ տեսակի խեցեղենի չափորոշիչների՝ անոթների ձևերի և զարդամոտիվների տեղական մշակումներով ամփոփելու տենդենց: Պատմա-մշակութային կարևոր այդ հարցադրումը իրականացված է գիտական նոր մոտեցումների խորագննին քննությամբ, արհեստագործական նվաճումների ու աշխատանքի կազմակերպման օժանդակ ձևերի փաստարկումով:

Ուսումնասիրված ժամանակաշրջանում Իրանի, Իրաքի, Եգիպտոսի և այլ երկրների վերնախավի կենցաղային միջավայրում բաժրորակ խեցեղեն սպասքն ուներ սպառողական մեծ պահանջարկ: Հայաստանի մայրաքաղաքներ՝ Դվինում և Անիում նույն խեցեղենի տեսականիների վավերացումը հաստատում է ակադեմիկոսներ Ն. Մառի և Գ. Օրբելու այն տեսակետի ճշմարտացիությունը, որ ազգային պատկանելիությունից և կրոնական ընկալումներից անկախ, տիրող խավի կենցաղավարության մեջ գերիշխում էր խեցեգործական որոշ արժեքների միանշանակ գնահատական և ճաշակի, ոճի ընդհանրություն:

Աշխատանքի գիտական նորույթը: Ներկա ատենախոսությունը Հայաստանի միջնադարյան ներմուծած խեցեղենի բոլոր տեսականիները համակողմանի ուսումնասիրությամբ ներկայացնելու մի փորձ է: Պատմական յուրաքանչյուր փուլում տնտեսական քաղաքականության մեջ այդ բնագավառում տեղի ունեցող տեխնոլոգիական նորանվածությունները, աշխատանքի բաժանման և դրան հետևող նեղ մասնագիտացումներն ու կազմակերպչական գործառույթների փոփոխությունները, հիմնավորված են այլ երկրների հետ Հայաստանի սոցիալ-տնտեսական, առևտրական ու մշակութային հարաբերությունների, ծավալների ու դրանցից բխող այլ պրոբլեմների հաշվառումով: Ատենախոսության մեջ առաջին անգամ վերծանված են Հայաստանի օտարամուտ խեցեղենի և հախճաասալերի վրա արձանագրված հիշատակությունները, որոնք կիրառվել են ա) իբրև գարդած, բ) անոթի տիրոջն ուղղված բարենաղթանքներ, գ) արհեստավորի իքքնությունը հաստատող կնքադրոշմ: Փորձել ենք վերծանել նաև Սիսիան Գորիս խճուղային ճանապարհին կառուցված Հարժիսի (Մախկին Յաջի) քարավանատան բարավորի վրա երկլեզվյան արձանագրության պարսկերեն տարբերակը, այն է՝ «Հիջրայի 700 (մ.թ. 1300-1301) Իվան [Բուրթեյյան] նրան շինության քարավանատուն կառուցեց, մաքրամաքուր լինի այս գինետունը այս ջուրը, Գյանջալի Սուլթան խան, շեյխ Հասանլի, հովիվ Ջաբիե»: Քարավանատան շինարարությունը սկսվել է 1300 թվականին և այլազգի մասնակիցների աճուճներն են հիշատակվում պարսկերեն տողում: Առաջարկված մեր վարկածը պահանջում է լրացուցիչ հիմնավորումներ, որովհետև հայերեն արձանագրությունը վերծանել է վիմագրագետ Ս. Բարխուդարյանը [ի Թվ ... ին] Չկը եւ իշխան Օրպէլ Բէշքէն 768+551=1319) իբրև Սյունիքի Օրբեյյան իշխան Բէշքէնի կողմից կառուցված աշխարհիկ շինություն ու մատնանշելով 19 տարվա տարբերություն:

Ուսումնասիրության աղբյուրագիտական հիմքը: Ամբողջովին օգտագործված է վիմագրական, պատմական աղբյուրների, դրամական գյուտերի տեղեկատվական բազան: Տեսակավորված են պեղումներով և պատահական խեցեղեն գտածոների հարուստ խմբաքանակները, ընդգրկված են ժամանակակից հրատարակությունների մեջ ամփոփված թանգարանային և մասնավոր հավաքածոների խեցեղենի բոլոր տիպերը համապատասխան ժամանակահատվածների թվագրումով:

Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը: Ատենախոսությունը շարադրված է ներմուծած խեցեղենը ըստ տիպերի դասակարգելու սկզբունքով, միաժամանակ հատկորոշող կռվան կիրառելով միջազգային պրակտիկայում ընդունված պատմա-համեմատական մեթոդի մեխանիզմը:

Շարադրանքում կարևորված է Դվինի պեղումների արդյունքները, երբ դրսեկ խեցեղենը հայտնաբերված է ստույգ թվագրվող շինության ավերակներից կամ

դրամների ապակու և համաժամանակյա այլ նյութերի կոմպլեքսում, որով խեցեղենի ծագումը և թվագրումը ամրագրված է օբյեկտիվ և կոնկրետ առանձնահատկություններով: Վերջին տարիներին անոթների արտաքին ձևերի զարդամոտիվների և այլ հատկանիշներով բնորոշելու պատմա-համեմատական մեթոդից զատ Հայաստանում իրականացված է խեցու և ջնարակի քիմիական, սպեկտրալ անալիզներ:

Աշխատանքի գործնական նշանակությունը: Այսատենախոսությունը քննության առարկա ժամանակաշրջանի խեցեղենը տարածաշրջանի բոլոր երկրների և Հայաստանի տնտեսական, առևտրական դրամագիտական ասպարեզները մշակութային դաշտի ուշագրավ մեկնաբանություններով ուսումնասիրելու մի փորձ է: Թեման բացահայտեց աշխարհագրական միևնույն միջավայրում ապրող ժողովուրդների սոցիալ-տնտեսական կյանքի ընդհանրությունը, ու գիտականորեն հիմնավորեց առևտրա-դրամական մշակութային կապերի բնույթն ու մակարդակը:

Վերջերս Հայաստանի պատմության թանգարանը լույս է ընծայել ներմուծած խեցեղենի հատկանշական ցուցակներ, որոնք ատենախոսության հրապարակման լրացումով գիտական աշխարհը կտեղեկացվի ինչպես Հայաստանի այնպես էլ տարածաշրջանի այլ երկրների խեցեգործական արժեքների հարուստ հավաքածուներին, որոնք հիմնավորված են Հայաստանի հուշարձանների պեղումների փաստագրական ատաղձով, այն պարագայում, երբ աշխարհի մասնավոր հավաքածուներից շատերը ձեռք են բերվել հնավաճառների առք ու վաճառքով և ինֆորմացիան վստահելի չէ: Այս ամենից էլ բխում է ատենախոսության գործնական նշանակությունը:

Աշխատանքի փորձաքննությունը և հրապարակումները: Աշխատանքի հիմնական դրույթները լուսաբանված են հրապարակված 6 հոդվածներում և մեկ ուսումնասիրության մեջ, որոնցից երեքը արտերկրներում: Ատենախոսությունը քննարկված է Հայաստանի պատմության թանգարանում արժանանալով դրական կարծիքի:

Աշխատանքի կառուցվածքը և բովանդակությունը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, ուսումնասիրության պատմությունից, երեք գլուխներից, որոնցից երրորդը ունի ենթավերնագիր, եզրակացություններից, օգտագործված գրականության, աղօտեսակների և հապավումների ցանկերից, գծանկարներից և լուսանկարների աղյուսակներից:

Ներածություն

Ներածության մեջ արծարծված են ատենախոսության կարևոր հիմնախնդիրները՝ միջնադարում տնտեսական քաղաքականության մեջ արիեստագործության կարևոր ճյուղերից մեկի խեցեգործության բնորոշումն իբրև քաղաքային կյանքի զարգացման երևույթ, շուկայական ապրանքի երաշխիք և բնակչության գեղագիտական ճաշակի արժեք: Վերլուծված են նաև քաղաքական հանգամանքների բերումով տնտեսական այդ բնագավառի զարգացման ընթացքը, հիմնավորված են անկման դրդապատճառները, առևտրական ուղիների ակտիվ կամ պասիվ գործակցության լծակները: Հայաստանում օտարամուտ խեցեղենի առկայությունը շոշափելիս արտադրական կենտրոնների տեղակայումները բացահայտելու խնդիր կար: Ատենախոսության մեջ այն լուսաբանված է դարա-

շրջանային փուլերով՝ IX-X դարերում հայտնի Իրաքի՝ Սամառա, Վասիտ, Քուֆի, Իրանի՝ Նիշապուր, Կենտրոնական Ասիայի՝ Սամարղանդ (Աֆրասիաբ), Չաչ, Սոգդ քաղաքներում գործող արհեստանոցների արտադրանքի շեշտադրությամբ: XII-XIII դարերում խեցեգործական կենտրոնները տեղակայվել են Ռեյ, Քաշան, Սուլթանաբադ, Ղուև և Իրանի այլ քաղաքներում, որն ապացուցված է Դվիհի և Անիի նյութերի քննությամբ: XIII դարի վերջերին XIV դարում քաղաքական սահմանների ընդլայնումով, Հայաստանի կապերը բացի Իրանից ուղղված էին դեպի Մերձդուլայան՝ Սարայ-Բաթու, Սարայ-Բերգե և Թուրքմենիայի Ուրգենչ քաղաքները, որն ակնհայտ է Անիի, Գառնիի, Եղեգնաձորի, Տիկնուհի և Ամբերդ ամրոցների նյութերի քննարկումով: Աշխատանքում խեցեղենը հետազոտված է ոչ միայն արտադրական ծավալների, տնտեսական կյանքի գործառույթներում խաղացած դերով, այլ իբրև գեղագիտական արժեք: Այդ ասպարեզում կենտրոնների միջև մրցակցությունը բնութագրված է զարդամոտիվների և թեմատիկ պուլժեների ընտրության տարբերությամբ դրսևորումներով: Ներածության մեջ առևտրական հարաբերությունների բնույթը մեկնաբանելու համար անդրադարձել ենք քարավանատներին, քարավանային ճանապարհների տեղակայումներին, դրամաշրջանառության քաղաքականության ծավալներին, առանց որոնց, ընկալելի չեն առևտրական կապերի խնդիրները և ապրանքային արժեքների մուտքը Հայաստան:

Հայաստանի օտարամուտ խեցեղենի հետազոտությանն անդրադարձել են հայագիտության երախտավորներ, ակադեմիկոսներ Ն. Մառը, Հ. Օրբելին, Բ. Առաքելյանը, պրոֆ. Կ. Ղաֆադարյանը, պ.գ.դ. Վ. Աբրահամյանը, պ.գ.թ. Ժ. Մուշեղյանը և այլք: Խնդրի վերաբերյալ մասնագիտական քննություններ է իրականացրել պ.գ.թ. Բ. Շելկովնիկովը, իսկ պ.գ.դ. Ա. Քալանթարյանը Դվիհի կենտրոնական թաղամասի շերտագրությամբ է ներկայացրել IX-X դդ. ներմուծած խեցեղենի ժամանակագրական սանդղակը: Հայաստանի ներմուծած հախճապակին քննության է արժանացել պ.գ.թ. Ա. Ժամկոչյանի կողմից: XIII-XIV դդ. ներմուծած խեցեղենը հիմնավորված է ակադ. Բ. Առաքելյանի պ.գ.թ. Գր. Կարախանյանի, Ա. Ժամկոչյանի և պ.գ.դ. Հ. Պետրոսյանի Գառնի գյուղաքաղաքին նվիրված աշխատանքներում: Ներմուծած խեցեղենի պատմա-համեմատական նյութերի վերաբերյալ արժեքավոր են Ֆ. Ջարեի Իրաքի Սամառա քաղաքի պեղումներին նվիրված հատորը Ա. Պոպի Իրանի միջնադարյան խեցեղեն մշակույթը ներկայացնող աշխատության II և V հատորները, Կենտրոնական Ասիայի պեղումներին նվիրված Գ. Շիշկինայի, Լ. Բրուսենկոյի և շատ այլ աշխատանքներ, որոնք լուսաբանում են IX-XIV դարերում տարածաշրջանի խեցեգործության զարգացման փուլերը, որ մշակութային հարաբերությունների շնորհիվ փոխանցվում էին երկրից-երկիր: Կարևոր են նաև գիտական պարբերականներում հրապարակված հոդվածները, որոնք արտացոլում են երբեմն պեղումների, իսկ հիմնականում արտերկրների թանգարանների հավաքածուների վերաբերյալ տեղեկատվությունները: Քաղաքական թեմաներ շոշափելիս անդրադարձել ենք նաև հայ պատմիչներ՝ Եղիշեի, Սովսես Խորենացու, Ստեփանոս Օրբելյանի, Կիրակոս Գանձակեցու և այլոց աշխատանքներին հիմնավորելու համար այս կամ այն խնդրի վերաբերյալ մեր եզրակացությունները:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐՄՈՒԾԱԾ ԽԵՑԵՂԵՆԸ IX-X ԴԱՐԵՐՈՒՄ

Ատենախոսության այս բաժնում ժամանակաշրջանի պատմա-քաղաքական իրադարձությունների ֆոնի վրա քննարկված է Հայաստանի և տարածաշրջանի այլ երկրների տնտեսական, առևտրա-դրամական ու մշակութային կյանքի զլորբալ տրամաֆորմացումները: IX դարի 30-ական թվականներին Արաբական խալիֆայության կազմալուծումը փոխեց տարածաշրջանի պատմա-աշխարհագրական քարտեզը: Խալիֆայության ներքաղաքական երկպառակությունները և վաղուց սկսված սոցիալական բնույթի շարժումները արագացրին նրա քայքայման գործընթացը:

Նույն ժամանակ հզորացավ բյուզանդական կայսրությունը, իսկ Մեծ Հայքում մինչև IX դարը տեղավորված արաբ տարրը ստեղծեց հայ նախարարությունների հողատարածքները օղակող ամիրայությունների մի շղթա, որն անխուսափելի դարձրեց մշտական բախումները հայ և արաբ տիրակալների միջև: Քաղաքականապես թուլացած խալիֆայությունն արձագանքեց նաև հայ Բագրատունիների պահանջին՝ ճանաչել նորանկախ Հայաստանը և Աշոտ Բագրատունուն (884-890) թագավոր ճանաչել:

Տարածաշրջանի քաղաքական աշխարհում տիրող այս խառնաշփոթը, սակայն չխոչընդոտեց ավատատիրական նոր հարաբերությունների զարգացմանը: IX դարի վերջերին, նախկին քաղաքները վերածվեցին արհեստավորական ու վաճառաչախ կենտրոնների, իսկ գյուղաքաղաքի վերջնական անջատումով ձևավորվեցին նորերը: Արհեստների ծավալումների ու նեղ մասնագիտացումների շնորհիվ խթանվեց առևտուրը: Քաղաքական ու տնտեսական կյանքի արմատական տեղաշարժերին հետևեց քաղաքներում սոցիալապես ունևոր խավի հայտնվելը, որ դարձավ շուկայական գործառույթների թելադրողը:

IX դարի վերջերին և X դարում, Հայաստանը, գտնվելով իրանական դինաստիաների ամիրայությունների տարածքների խաչմերուկում, առևտրական հարաբերություններով անմիջականորեն առնչվում էր նրանց վաճառաչախ քաղաքների հետ:

Ատենախոսության այս բաժնում ներմուծած խեցեղենի ուսումնասիրությունը կենտրոնացած է Դվին քաղաքի պեղումների արդյունքներով: IX դարի վերջերին փոխված կարգավիճակով քաղաքը կառավարվում էր նախ՝ Ատրպատականի Սաջյան, ապա X դարում Սալարյանների կողմից: Կար և Բյուզանդիայի նվաճողական նկրտումների պարագան, որ քաղաքը վերածել էր կռվախնձորի: Վերահաս 894 թվականի երկրաշարժն էլ լրացրեց քաղաքի ավերումը: Այնուհանդերձ, պեղումների նյութերը վկայում են, որ քաղաքական և տնտեսական կարևորությամբ պայմանավորված, Դվինն արագ վերականգնվեց: 1937 թվականից սկսած որոշ տարիների ընդմիջումներով մինչև օրս քաղաքում իրականացված պեղումները ի հայտ են բերել ներմուծած խեցեղենի հարուստ տեսականիներ, որոնց ուսումնասիրությունը կատարված է ժամանակագրական փուլերով, բացահայտելով դրանց ներկրման կենտրոնները, ծավալային մասշտաբները, տեսակների բազմազանությունը, առևտրական ճանապարհների որոշակի հիմնավորումով: Դվինում ներկրված խեցեղենը հայտնաբերված է Կենտրոնական թաղամասի այն հատվածներում, ուր IX-X դդ. մշակութային հորիզոնները խաթարված չէին XII-XIII կառուցապատումներով և ավելի ուշ XVІІ-ХVІІІ դարերի թաղումներով և իրողությունը այդ հատվածներում գտնված օտարամուտ խեցեղենը թվագրելու և տիպա-

բանական սանդղակը ներկայացնելու որոշակի հնարավորություններ տրամադրեց:

Ատենախոսության մեջ IX-X դարերի ներմուծած խեցեղենը վերլուծված է տիպաբանական հետևյալ համակարգով:

1) **Հասարակ խեցեղենը**, որ խմբավորված է ա) կաղապարանախշ անոթների բ) սնդկամաններ տիպերով: Դրանց ներկրման կենտրոնները՝ Իրանի Շոշ, Իրաքի Բաղդադ, Սամառա, Աֆղանստանի Լաշքարի Բազար հնավայրերն են: Հասարակ խեցեղենի տեղայնացման փաստերը ատենախոսության մեջ վավերացված է ինչպես տեղական մշակույթին բնորոշ թեմատիկ սյուժեների ուսումնասիրությամբ, այնպես էլ տեղում խոտանված բեկորների առկայությամբ:

Ձնարակված խեցեղեն. Ներմուծած խեցեղենը հայտնաբերված է Դվինի IX դարի շերտերից և հայտնի է երկու տեսակներով՝ ա) միագույն, բ) բազմագույն:

Ուսումնասիրությամբ պարզված է, որ դրանց ներմուծման հիմնական աղբյուրներն էին Իրանը, Իրաքը, Կենտրոնական Ասիայի երկրները: Հայաստանը հարավային հայտնի մայրուղիով կապված էր նաև Սիրիայի, Եգիպտոսի, Պաղեստինի և տարածաշրջանի այլ երկրների հետ և ատենախոսության մեջ քննարկված են նաև այդ երկրներից ներմուծված նյութերը: Ձնարակված խեցեղենի արտադրության բնագավառում գոյություն ունեցող ներմուծած խեցեղենի ձևերի և զարդանոտիվների տեղայնացման տեղեկեց: Շարադրանքում առանձին բաժնով Դվինում և Արագածում հայտնի ջնարակված նյութերի արտաքին ձևերի և զարդանոտիվների մանրակրկիտ քննությամբ, պորբլենը ներկայացված է որոշակի լուծումներով:

Հախճապակի: Առաջին գյուտերը հայտնի էին վաղ անցյալից (Եգիպտոս, Հայաստան և այլն), սակայն արտադրական ծավալների, որակական հատկանիշների և զարդանոտիվների բովանդակային առանձնահատկություններով IX-X դարերում արձանագրված է նոր մակարդակ: Հայաստանում և հարակից երկրներում նյութն առանձնանում է հախճապակու հետևյալ տեսակահիներով՝

ա) Սպիտակ ֆոնի վրա կոբալտի կամ պղինձօքսիդի ներկանյութի հարդարմամբ:

բ) Սպիտակ ֆոնի վրա շողուն ոսկեգույն զարդերով:

գ) Բազմագույն (ծիթապտղի, դարչնագույնի, դեղինի, և ալ կարմիր ու դարչնագույն) ներկանյութերի նկարագարդմամբ անոթների բեկորներով:

Հախճապակե խեցեղենի վերոհիշյալ բոլոր տեսակահիների անմիջական զուգահեռները հայտնի են Իրաքից (Սամառա), Իրանից (Նիշապուր), Սիրիայից (Ալ-Մինա), Եգիպտոս (Ֆուստատ) և Կենտրոնական Ասիայում Աֆրասիաբ, Չաչ և Սոգդ կենտրոններից՝ հաստատելով ժամանակի Հարավային մայրուղիով տարածաշրջանի այդ երկրների հետ Հայաստանի առևտրա-մշակութային հարաբերությունների առկայությունը: Այս հիմնախնդրի վերլուծությունն իրականացված է այդ մասին շրջանառվող բոլոր տեսակետների հաշվառումով, և մեր կողմից ներկայացվող համապատասխան եզրակացություններով:

Չինական սելադոններ: Այս որակի խեցեղենը հայտնի է Անիի պեղումներից մի քանի բեկորներով: Դվինում ներմուծած խեցեղենի առատ գյուտերի շարքում դրանց բացակայությունը արշավախմբի ղեկավար պրոֆ. Կ. Ղաֆադարյանը բացատրել է տեղում կիսաթափանցիկ խեցեղենի ճոխ տեսակահիների գոյությամբ, որն իր տեսակետով փոխարինել է սելադոնին: Հարցադրումը պորբլենատիկ է և պահանջում է լրացուցիչ ուսումնասիրության, որ նյութի սակավության պատճառով առայժմ մեկնաբանված չէ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐՍՈՒԾԱԾ ԽԵՑԵՂԵՆԸ XII-XIII ԴԱՐԵՐՈՒՄ

XI դարի 40-ականթվականներից սկսած Հայաստանի քաղաքական ու մշակութային կյանքը և անկախությունը վտանգվեց Բյուզանդական ազդեցության, ապա տարածաշրջանում հայտնված սելջուկ վաչկատուն ցեղերի արշավանքներով: Բյուզանդիան, ի սկզբանե, չընկալելով Հայաստանի անկախությունը, ներքին երկպառակտությունների և քաղաքական խարդավանքների միջոցով 1045 թվականին գրավեց Անին: Իրանը և Կենտրոնական Ասիան, 990 թվականից Աֆղանական Ղազնևիդյան դինաստիայի ձեռքին էր, բացառությամբ Ամու-Ղարյա գետից հյուսիս ընկած տարածքներից, որոնք Կարախանիդներին էր պատկանում: 1030 թվականին սելջուկների արշավանքը կրկին ձևափոխվեց Մերձավոր Արևելքի և Կենտրոնական Ասիայի քաղաքական քարտեզը: Ոչնչացանելով Բուվեիդների իշխանությունը Իրանում՝ 1040 թվականին Տուղրիլ Բեկը նվաճեց Նիշապուրը, իսկ Կենտրոնական Ասիայում Չաղրիլ Բեկը տիրացավ ողջ տարածաշրջանին՝ ու կենտրոն հռչակեց Մերվը: 1071 թվականին Մանազկերտի ճակատամարտում հաղթելով Բյուզանդիային, նրանք տիրացան Եգիպտոսին, Սիրիային, Հայաստանին ու ստեղծեցին սելջուկյան հզոր մի աշխարհակալություն: Շուրջ մեկ դար նրանց տիրապետության տակ, Հայաստանը հայտնվեց մի ճգնաժամում, որ դրսևորվեց քաղաքական, տնտեսական, մշակութային, առևտրական և այլ բնագավառների զարգացման խոր հետադիմությամբ: Իրողությունը նպաստեց բնակչության մասսայական արտագաղթին: Երկրում ստեղծված դատարկությունը փոխեց նաև ավատատիրական կացութաձևի պատկերը, ի վնաս հայ հողատեր ազնվականության: Հայաստանի միջին և արևմտյան մասերն զբաղեցրին Խլաթի, Կարսի, Կարիհի, Շահ Արմենների և Դվիմի, Անիի Շեդդատյանների ամիրայությունները, որոնք Հայոց աշխարհում գոյացրին մի նոր ճեղքվածք, տեղիք տալով այդ տարածքներում սելջուկյան ու քրդական զանգվածների հաստատմանը: Դվին և Անի քաղաքները հարկադրված շարունակեցին ամիրայական այդ միավորումների վաճառաշան քաղաքների հետ կապել իրենց առևտրական և մշակութային փոխհարաբերությունները: Հայաստանի քաղաքական տնտեսական ու մշակութային կյանքի նոր վերելքին սկսվեց XII դարի առաջին քառորդում, երբ հայ-վրացական միացյալ ուժերը ամիրապասալար Ջաքարե և Աթաբեկ Իվանե Ջաքարյանների գլխավորությամբ Հայաստան աշխարհն ազատագրեցին սելջուկյան լծից: Ստեղծված խաղաղությամբ վերստին ծաղկեց երկիրը, ամենուրեք ծավալվեց բուռն շինանարություն, աշխուժացավ առևտուրը, բարգավաճեցին արհեստները, որոնց զարգացումը պայմանավորվեց գյուղից քաղաքի անջատման խորացումով և արհեստավորական խավի քաղաքում կենտրոնացվելու գործընթացով: Պեղումների շնորհիվ հայտնաբերված նյութը արտաքին ձևերի բազմազանությամբ, որակական բարձր հատկանիշներով և հատկապես մասնագիտացման խորացումով ապացուցվում է, որ արհեստավորն արդեն աշխատում էր ոչ միայն պատվերով, այլ փորձում բավարարել օրըստօրե ծավալվող շուկայական պահանջարկը: Ապրանքային և դրամական տնտեսության զարգացումով պայմանավորված XII - XIII դարերում առաջացավ և սոցիալական նոր մի վերնախավ, որն օգտվում էր

առևտրական ճանապարհներով մոտակա և հեռակա երկրների բարձրարժեք սպասքից և ինքն էր շուկայի թելադրողը:

XII - XIII դարերի ներմուծած խեցեղենը, հիմնականում հախճապակու որակի է, խմբավորված է հետևյալ տեսականիներով. ա) սպիտակ ֆոնի վրա ոսկե-դարչնագույն շողյուն հախճապակի (վերջնարկային եղանակով նկարազարդված), բ) կոբալտի ֆոնի վրա ոսկե-դարչնագույն շողյունով նկարազարդված (վերջնարկային), գ) սպիտակ ֆոնի վրա բազմագույն նկարազարդումով խեցեղեն (մինաի), դ) սպիտակ ֆոնի վրա կոբալտի շերտագծերով նկարազարդված ե) բուսական զարդերով և արձանագրությունների հորիզոնական գոտիներով հարդարված խեցեղեն, զ) չինական սելադոններ, է) ենթաջնարակային նկարազարդումով խեցեղեն, ը) Տեղական ընդօրինակություններ:

Ատենախոսության մեջ հախճապակու այս խմբաքանակներն ուսումնասիրված են պատրաստման հնարների, հարդարման մանրամասների և արտաքին ձևերի նկարագրման սկզբունքով, հաշվի առնելով նյութի ժամանակագրության և ծագման վերաբերյալ շրջանառվող բոլոր տեսակետները, և այդ մասին ներկայացնելով համապատասխան եզրակացություններ: Նյութի ծագման և ժամանակագրության վերաբերյալ պորբլեմին էական լուծումներ է տրամադրում Դվին քաղաքի պեղումները: XII - XIII դարերի դրսեկ խեցեղենը հուշարձանում հաճախ հայտնաբերված է համաժամանակյա դրամների կոմպլեքսում, կամ տվյալ ժամանակաշրջանում կառուցված շինությունների ավերակներում, հորերում: Ատենախոսության մեջ կարևորված են նաև այն նյութերը, որոնք նման են Հայաստանի հուշարձաններից գտնվածներին, բայց հաճախ կրում են հիջրայրի XII - XIII դարերի հիշատակագրություններ: Դա բնորոշ է ոսկե-դարչնագույն շողյունով նկարազարդված խեցեղենին և թվագրման կարևոր աղբյուրներից մեկն է հանդիսանում: Շարադրանքում ուշադրության է արժանացել Ապարանում հախճապակուց և ապակուց բաղկացած հավաքածոյին, որ բաղկացած է XIII - XIV դարերով թվագրվող նյութերից և ուսումնասիրված է որպես քաղաքային միջավայրից հեռու բարձրորակ սպասքի կիրառության փաստացի արժեք:

Հայաստանն XII - XIII դարերում, սոսկ, ներկրող չէր: Նա իր մրցունակ արանքով մասնակցել է միջազգային առևտրին և խեցեղենի արվեստի բնագավառում հիշատակելի է որպես խեցեղենի որոշ տեսականիների արտահանումն ապահովող՝ կիսաթափանցիկ թասեր, կարծրախեցի մատուցարաններ: Փաստն ապացուցված է Հայաստանից Դվին, Անի քաղաքների առատ գյուտերով, այն պարագայում, երբ Իրանում և Եգիպտոսում նմուշները հատուկեմտ են: XII-XIII դարերում Հայաստանում ընդօրինակվել են և հեռավոր Չինաստանի խեցեղենի նմուշների ձևերն ու զարդամոտիվները, որոնց մասին ատենախոսության մեջ առանձին անդրադարձ կա: Թեև Անիի միջոցով գործում էր Գյուսիսային մայրուղին, սակայն Դվինում հայտնաբերված XII -XIII դդ. հարուստ նյութն ապացուցում է, որ Հայաստանի կապերն ինչպես IX -X դարերում հարավային ճանապարհով հիմնականում առնչվում է Իրանի տարածքում տեղակայված վաճառաշահ քաղաքների հետ՝ Ռեյ, Քաշան, Դուն, Սուլթանաբադ, Թավրիզ և այլն:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐՍՈՒԾԱԾ ԽԵՑԵՂԵՆԸ XIII - XIV ԴԱՐԵՐՈՒՄ

Հայաստանը սելջուկներից ազատագրվելու միջոցին իրենց ծառայություններով աչքի ընկած զորավարներին Ջաքարյանները ժառանգական իրավունքով կառավարիչներ կարգեցին համապատասխան տարածքներում: Այդ ճանապարհով հզորացան Վաչուտյանները Արագածոտնում, Օրբելյանները Սյունիքում, Պռոշյանները Կոտայքում, Դոփյանները Ծարում և այլն: Իրադարձությունները փոխվեցին 1225 թվականներից սկսած, երբ Հայաստան ներխուժեց Ջալալեդդինի հրոսակախումբը, ապա 1236 թվականին մոնղոլները: Իրողությունը Հայաստանի նախարարական տներին կանգնեցրեց երկընտրամբի առջև՝ հպատակվել մոնղոլներին կամ շարունակել պահել չեզոք դիրք:

Երկիրը վերջնական բնաջնջումից փրկելու համար, նրանք հպատակվեցին մոնղոլներին կարողացան անխաթար պահել իրենց տիրույթները և ապահովել ապահարկ վիճակ: Մոնղոլները 1256 թվականին մի քանի անգամ Իրանի և շրջակա երկրների վրա հարձակումներ գործելուց հետո Չինգիզ խանի թոռ Հուլախու խանի շնորհիվ Իրանում Թավրիզ կենտրոնով կայացրին Իլղանությունը՝ աշխարհակալ մի պետություն, որի կազմում էր նաև Հայաստանը:

Ժամանակի ընթացքում նրանք յուրացրին տեղի ժողովուրդների, հատկապես Իրանի լեզուն, մշակույթը իսկ Ղազան խանի ժամանակ առևտրա-տնտեսական կյանքում հասան մեծ նվաճումների, հակադրվելով մոնղոլների հյուսիսային ճյուղին՝ Ջուջիդներին: Հուլախույան իշխանության նստակյաց վերնախավը մեծ տեղ էր հատկացնում առևտրին: Նրանց քաղաքականությամբ՝ իրենցից բարձր կանգնած ժողովուրդներին տնտեսական ու մշակութային նվաճումները յուրացնելով, երկրում զարգացրին արհեստներն ու առևտուրը: Իբրև շահութաբեր գբաղմունք առևտրական գործընթացը շահագրգռեց նաև հայերին, որոնք առևտրում ակտիվ գործունեություն էին ծավալում: Նրանց մասին արժեքավոր են հայ պատմիչների տեղեկությունները (Կիրակոս Գանձակեցի և Վարդան Բարձրաբերդի): Առևտրական ճանապարհներն էլ այդ դարաշրջանում աշխույժ էին այն տարածքներում, որոնք բնակեցված էին եկվոր մոնղոլներով և անցնում էին իրենց հպատակեցված նախարարությունների տարածքով՝ Գառնի, Երևան, Դվին, Տիկնունի ամրոց, Վեդի, Եղեգնաձոր, Նախիջևան, Թավրիզ ուղղությամբ:

Ժամանակաշրջանի ներմուծած խեցեղենը ուսումնասիրված է մոնղոլական ժամանակաշրջանի հայտնի հուշարձանների՝ Գառնիի, Տիկնունիի և Եղեգնաձորի պեղումներից հայտնաբերված ջնարակված ու հախճապակե խեցեղեխ քննությամբ և բաժանված է մի քանի խմբերի: Ուսումնասիրությունն իրականացված է տվյալ ժամանակաշրջանի խեցեգործության մեջ իրականացվող տեխնոլոգիական նորանուծությունների, գունային կոլորիտի փոփոխությունների և ժամանակին տիրող նկարչական առանձնահատկությունների հաշվառումով: Այն հիմնականում բազմագույն է և հայտնի է ներկապնակի կոլորիտային նոր լուծումով ու նախորդ դարերից տարբերվող զարդաձևերի ընտրությամբ: Առանձնանում են հիշյալ տիպերը. ա) կանաչի և կապույտի, երբեմն էլ դարչնա-

գույնի ու մանուշակագույնի խառնուրդով երկրաչափական կամ ոճավորված ծաղկազարդերի այնպիսի պատկերների համադրությամբ, որ միանգամայն տարբերվում են նախորդ դարաշրջանների պատկերագրական չափորոշիչներից, բ) այս տիպը բնորոշ է փիրուզագույն կամ երկնագույն ֆոնի վրա մուգ կոբալտի սևին հասնող երանգով նկարագարոված խեցեղենի նմուշներով, որի հարդարանքում տիրապետող են երկրաչափական գծերի տարբեր դրսևորումները, թեև քիչ չեն և բուսական ծաղկեփնջերի և ոճավորված թռչնապատկերներով հարդարվածները, գ) X դարում ջնարակած անոթների մակերեսը անգուրբի կամ կոբալտի վրձնահատվածներով և գծերով հարդարելու հայտնի խեցեգործական հնարը XIII - XIV դարերում ավելի պարզունակ դրսևորումներով էր հայտնի: Ապացույցը Դվինի և Գառնիի պեղումներից հայտնի նյութերն են, որոնց զուգահեռները հայտնաբերված են թե Սարայ-Բերգեյում, թե Մերձսևծովյան, Ազակ, Խերսոնես հուշարձաններում: դ) Ներմուծած խեցեղենի մի քանի բեկորներ իրանի Սուլթանաբադ քաղաքի արտադրանք են: ե) Չինական սելադոնները հայտնի են սակավաթիվ նմուշներով, իսկ Եղեգիսում հայտնաբերված սելադոնները դրանց նմանակումներն են և Հայաստանն են ներկրվել Սուլթանաբադից, ուր կար այդ խեցեղենի արտադրությունը: Նյութը հայտնաբերված են Հուլավույան Արդուն խանի (1280-1291) և Աբու Սայիդի (1317-1335) դրամների հետ, որ հաստատում է դրանց ժամանակագրական որոշակիությունը: զ) Մեծ խումբ են կազմում հախճաասլերը, որոնք ճարտարապետական շինությունները հարդարելու միջոց էին, բնորոշ Իրանի մշակույթին, սակայն ժամանակի քաղաքական իրավիճակի և ժողովուրդների շփումների արդյունքում ունեցավ լայն արձագանք նաև Հայաստանում: Ատենախոսության մեջ հախճաասլերը, որ հայտնաբերված են Անիից, Գառնիից, և Տիկնունի ամրոցից քննարկված են ժամանակագրական հետևողականությամբ և տիպաբանական համակարգումով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի IX-XIV դարերի ներմուծած խեցեղենին նվիրված սույն ատենախոսությունը տարածաշրջանի այլ երկրների համաժամանակյա նյութական մշակույթի լայն էքսկուրսների համեմատության հենքով ամփոփում է հետևյալ առանձնահատկությունները:

Հայ պատմագրությամբ ընդունված պատմա-փուլային սահմանազատումով (IX-X, XI-XIII, XIII երկրորդ կես, XIV դար) խեցեղենի հետազոտությունն իրականացված է այդ ժամանակահատվածներում երկրում տիրող ներքաղաքական իրավիճակի, միջազգային կյանքի, արհեստագործության, առևտրա-տնտեսական և պատմա-մշակութային հարաբերությունների ընդհանրացված կոնտեքստով:

1) IX դարի առաջին կեսին Արաբական խալիֆոսյան կազմալուծման և Բյուզանդական կայսրության հզորացման հետևանքով Մերձավոր Արևելքի ընդհանուր միջավայրում փոխվեց ուժերի հարաբերակցությունը հօգուտ Բյուզանդիայի: Հայաստանի ներքաղաքական կյանքն այդ ժամանակաշրջանում բարդ էր՝ մի կողմից երկրի կառավարումն իրենց ձեռքը վերցնելու Սյունիքի, Տաշիր Ձո-

րագետի, Վասպուրականի նախարարական տների շահարկումներով, մյուս կողմից Մեծ Հայքի, Իրանի և Կենտրոնական Ասիայի տարածքով սփռված ամիրայությունների կազմավորմամբ, ի վերջո, Հայաստանում անկախության համար խալիֆայության կողմից Բագրատունիներին «Իշխանաց իշխան» տիտղոսով ապահովելու անհրաժեշտությամբ, ստեղծվել էր հակամարտություններով ու հակասություններով լի մի իրավիճակ, որ փոխեց խալիֆայության նախկին վարչատերիտորիալ և աշխարհագրական սահմանների քարտեզը:

2) Այս ամենով հանդերձ, Հայաստանում և տարածաշրջանի այլ երկրներում ավատատիրական նոր հարաբերությունների զարգացումը չխոչնդոտվեց՝ արձանագրվեց սոցիալ-տնտեսական ու առևտրական հարաբերությունների զարգացման մի նոր մակարդակ: Նախկին քաղաքները վերածվեցին արհեստավորական վաճառաչառի կենտրոնների, իսկ գյուղ-քաղաք վերջնական անջատումով ձևավորվեցին նորերը, ուր արհեստների ծավալումների ու նեղ մասնագիտացումների շնորհիվ խթանվեց առևտուրը, նոր լիցք ստացավ քաղաքային մշակույթը: Քաղաքական ու տնտեսական կյանքի արմատական տեղաշարժերին հետևեց քաղաքներում սոցիալապես ունևոր խավի ի հայտ գալը, թելադրում էր շուկայի պահանջարկը:

3) IX-X դարերում Հայաստան ներկրված խեցեղենը հիմնականում Դվինից է, որն արաբական տիրապետության ողջ ընթացքում (VII-IX դարեր) «Արմինիա» ոստիկանության կենտրոնն էր և վերահսկում էր ողջ Անդրկովկասի սահմանային, հարկային, դրամական ու տնտեսական համակարգը: Թեև IX դարի վերջերին Դվինը փաստացի գտնվում էր Ատրպատականի Սաջյան ամիրայությունների տիրապետության տակ, սակայն իշխանության ձեռքբերման համար Բյուզանդիայի, Բագրատունիների և Սաջյանների միջև պայքարը քաղաքը դարձրել էր բախումների առարկա: Այնուհանդերձ, ռազմական գործողությունների ընդհատումների միջոցին քաղաքային կյանքը բարգավաճել է: Դվինի բազմամյա պեղումների արդյունքների ուսումնասիրությունը վկայում է, որ այդ ընթացքում Դվինն առևտրական հարաբերություններով առնչվում էր Իրաքի, Իրանի, Կենտրոնական Ասիայի, Չինաստանի, Սիրիայի, Եգիպտոսի և Մերձավոր Արևելքի այլ երկրների հետ:

4) Նյութի տիպաբանական դասակարգումը ըստ հայտնաբերման հանգամանքների և զուգահեռ նյութերի վկայում է, որ հասարակ, ջնարակած և հախճապակե անոթների որոշ խմբաբանակներ ներկրված են Իրաքի՝ Սամառա, Վասիտ, Քուֆի, Բասրա, Իրանի՝ Շոշ, Նիշապուր, Սիրիայի՝ Ալ-Մինա, Եգիպտոսի՝ Ֆուստատ և Չինաստանի քաղաքներում գործող խեցեգործական աշխատանոցներից:

5) IX-X դարերի ներմուծած խեցեղենը քննարկելիս առանձին ուշադրություն է հատկացվել զարդանոսիվների նկարագրին, որոնք հիմնավորում են ժամանակաշրջանի խեցեղենի նկարչական ոճն ու տեղագրական առանձնահատկությունները: Հիշյալ բոլոր արհեստանոցների արտադրանքին բնորոշ էր անոթների արտաքին ձևավորման միատիպ կաղապարածը՝ մեծ թասեր, իսկ բացառությամբ Խորասանի, հարդարանքում տիրապետող էին երկրաչափական զարդեր՝ ձվաձև շրջաններ, սլաքաձև նախշեր, ուղիղ և թեք գծեր, հաճախ էլ իբրև արհեստանոցի դրոշմակնիք ծառայող վարպետի նշաններ կամ կոնկրետ անուններ: IX-X դարերում հարդարման համար արաբերեն տառերի գեղագրական ու գեղա-

գիտական առավելությունները, յուրաքանչյուր արհեստանոց իր արտադրանքը հարստացնում էր այդ լեզվի «քուֆի» տառատեսակի առանձնահատուկ ոճով: Արհեստագործների ստեղծագործական որոնումներով պայմանավորված, յուրաքանչյուր արհեստանոցի տառաձևերը մշակված էին իրենց գեղարվեստական մտածողության առանձնահատկության համապատասխան և այդ ասպարեզում ձևավորված էին գեղարվեստական առանձին դպրոցներ: Այսպես կարելի է առանձնացնել Իրաքում՝ Սամառայի, Իրանում՝ Նիշապուրի Կենտրոնական Ասիայում՝ Աֆրասիաբի դպրոցները, որոնք իրարից տարբերվում էին արձանագրությունների բովանդակությամբ, տառաձևերի գեղագրական ոճով և գարդաձևերի տարատեսակ լուծումներով: Ուսումնասիրության ասպարեզը տրամադրելով արաբագետներին, որոնք պատշաճ հետազոտություններ ունեն՝ Չերցֆելդ է., Ֆլյուրի Ս., Կրաչովսկայա Վ., Բոլշակով Օ. և ուրիշներ, կարելի է ասել, որ Դվինում բացառությամբ Սամանյան (Խորասանյան) օրինակների գոյություն ունի այդ խնդրին վերաբերող մի հավաքածու, որը կարող է լրացնել անոթների վրա քուֆի տառատեսակի էվոլյուցիոն զարգացման փուլերն ու առանձնահատկությունների քննությունը:

6) IX-X դարերում ընդունված էր նաև անոթները կենդանիներով և մարդկանց պատկերներով ճոխացնելու գեղագիտական միջոցը: Թանկարժեք սպասքը նման սյուժեներով ամբողջացնելու միտումը հատուկ էր խեցեգործական որոշ կենտրոններին և պայմանավորված էր իսլամի գաղափարախոսության տիրող սկզբունքների մերժումով: IX դարում իսլամն արդեն թափանցել էր Արաբական խալիֆայության տարածքում ապրող ժողովուրդների կյանքի բոլոր ոլորտները և դոգմաներից մեկով արգելված էր կիրառական և դեկորատիվ արվեստի առարկաների վրա կենդանի եակներ պատկերել (կենդանիներ և մարդկանց): Այդ հողի վրա իսլամի գաղափարախոսության հետևորդների և ազատախոհների միջև ծավալվում էր սուր պայքար: Ամենայն հավանականությամբ, Իրաքի Սամառա և Իրանի Նիշապուր արհեստանոցներից շատերը շրջանցել են այդ կանոնը և անոթները հարդարելով նշված ոճով, ըստ էության, ճոխացնում էին արտադրանքը, նպաստում շուկայական պահանջարկի մեծացմանը: Հակառակ այս հոսանքին, Խորասանի Աֆրասիաբ և այլ խեցեգործական աշխատանոցները խստիվ հետևել են իսլամի կանոնակարգին և համաժամանակյա խեցեղենը հարդարել են, սոսկ, երկրաչափական, բուսական և արձանագիր մոտիվներով:

7) IX-X դարերի նյութի առարկայական քննությունը ներմուծման աղբյուրների հստակեցմամբ միանգամայն համահունչ է հայկական աղբյուրներում հիշատակվող առևտրական Հարավային ճանապարհին, որով Դվինից քարավանները մեկնել են Իրան, Իրաք, Կենտրոնական Ասիա, Սիրիա, Եգիպտոս և այլ երկրներ: IX-X դարերով թվագրվող Դվինի տարածքից գտնված դրամները շոշափում են այդ երկրների հետ քաղաքի առջ ու վաճառքի փաստացի դրամական քաղաքականությունը, հաստատելով, նաև այն փաստը, որ Դվինը Մերձավոր Արևելքի տարածաշրջանի վաճառաշահ և առևտրական կարևոր հանգույցներից մեկն էր հանդիսանում:

8) Ներմուծված խեցեղենի մասին մեր դիտողությունները բացառում է Հայաստանը համարել, սոսկ, ներկրող, որովհետև երկիրն ուներ մրցունակ ապրանքներ

րի տեսականիներ, որոնց մասին հիացմունքով են գրում արաբ աշխարհագիրները (Ալ Մուկադդասի, Իբն Զաուկալ, Իբն Խորդադեբես և այլն): Դվինի IX-X դարերի ներմուծած խեցեղենի որոշ խմբերի քննությունը պարզեց, որ ներկրված խեցեղենի մասնակի առանձնահատկություններ (արտաքին ձևեր և զարդամոտիվներ) միջազգային ընդունված չափանիշների գործուն հմտությունների կիրառումով տեղայնացավ: Երևույթը բացատրվում է մշակութային ազդեցության և փոխազդեցության իրողությամբ, և շրջիկ խեցեգործների գործունեությամբ:

9) XI-XIII դարերում Հայաստանի քաղաքները արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների մակարդակով հայտնվեցին զարգացման նոր փուլում: Ժամանակի սոցիալ-տնտեսական կյանքի բարձր ցուցանիշներով պայմանավորված «քաղաք» հասկացությունն արդեն ընկալվում էր արտադրական, դրամական ու մշակութային հարաբերությունների, ինչպես և հասարակական կյանքում մարդկային գործոնի ընդհանրացված համակարգի ամբողջությամբ: Այդ ժամանակաշրջանում քաղաքամայր Անին Դվինին հավասար սոցիալ-տնտեսական կյանքում ու առևտրական հարաբերություններում դիմամիկ նոր զարգացման աստիճանի հասավ և իր կարևորությամբ ընթացավ Դվինին համաքայլ շատ դեպքերում նույնիսկ նրանից առաջ անցնելով: Երկու քաղաքներում գործող խեցեգործական արհեստանոցների ընդհանուր արտադրանքը (հասարակ և ջնարակած խեցեղեն), որակական հատկանիշներով հասել էր այնպիսի մակարդակի, որ վերացած էր որոշ տեսականիների երկիր ներկրելու անհրաժեշտությունը, պրոբլեմ, որ IX-X դարերում առկա էր Դվինում: Միջազգային շուկայում զգալի պահանջարկ վայելող իրանական հախճապակին համապատասխանեն արժեք ձեռք բերեց նաև հայկական միջավայրում: Ընդհանրացնելով Դվինից և Անիից հայտնաբերված այդ որակի խեցեղենի խմբաքանակները, տիպաբանորեն դասակարգելով տեսականիներն մենք հանգեցինք այն հետևության, որ հիմնականում ներմուծումն իրականացվել է Իրանի Ռեյ, Քաշան, Սուլթանաբադ, Թավրիզ, Դում, Սավա և այլ խեցեգործական կենտրոններից: Հետևաբար, XI-XIII դարերում Դվինի և Անիի առևտրա-տնտեսական կապերը սերտաճած էին հիմնականում Իրանի հետ:

10) Այդ դարերում Հայաստան ներկրված խեցեղենի հիմնական տեսականիների հարդարանքը հատկապես շողյուն հախճապակին տարբերվում էր IX-X դրանոթների վրա ամփոփված նկարչական ոճերից: Արժեքավոր սպասքին զեղագիտական տեսք հաղորդելու համար ժամանակի արվեստի գիտակ խեցեգործները, որոնց զգալի մասը միաժամանակ իրանական մանրանկարչական դպրոցի սաներն էին, աշխատել են խեցանոթների վրա հավերժացնել ժամանակի ընդունված սյուժեները՝ արքայական կյանքի դրվագներով, ճոխ ընդունելություններով, կենցաղային տեսարաններով, զբաղմունքի մանրամասներով և արվեստագետ-խեցեգործների փորձերից էր վերականգնել սասանյան արծաթե սպասքի վրա դրվագված թեմաները, իրողություն, որ արծաթի ճգնաժամի պատճառով XI դարից կորցրել էր իր գործառույթը: Անոթների վրա միևնույն միջավայրում ապրող ժողովուրդների միաստ ու կացի, զբաղքունքի, զվարճանքի արտացոլումը նաև ազգագրական կարևոր աղբյուր են: Կան և առասպելական ու դիցաբանական սյուժեներով հարդարված սպասքի նմուշներ, որոնք դրսևորում են ժողովուրդներ-

րի հավատալիքների ու հոգևոր աշխարհի մտածողության առանձնահատկությունները: Թեև հիշյալ թեմաները առանձին ուսումնասիրության առարկա են, բայց աշխատանքում այդ մասին կան որոշ անդրադարձներ: Արձանագրություններն իբրև թեմայի բովանդակությունը լրացնող տարբերակներ XII-XIII դարերում «Նասիս» կամ «շեքեստե» տառաձևով է արտահայտված: Որոշ մասի վերծանությունը ցույց տվեց, որ դրանք իրանական պոեզիայից վերցրած չափածո խոսքեր կամ անոթի տիրոջն ուղղված բարեմաղթանքներ են:

11) XIII դարի երկրորդ կեսին XIV դարում հայ պատմագրության ընդունված փուլով նյութն ուսումնասիրելիս, համոզվեցինք, որ Դվինը մոնղոլական տիրապետության այդ ժամանակաշրջանում արդեն կորցրել էր իր վաղեմի փառքը և մոնղոլ տիրակալները հաստատվել էին Տիկնունի ամրոցում, Գառնիում, Եղեգնաձորում, Արագածոտնում, Ամբերդում մեծ ու փոքր պլաններում, իսկ Անին իբրև շարքային բնակավայր դեռ շարունակում էր իր գոյությունը, որ հաստատվում է խեցեղեն առարկաների, հախճաասալերի ու դրամների առկայությամբ:

Հայաստանի առևտրա-տնտեսական կյանքի աշխուժացումը նկատելի էր XIII դարի 50-ական թվականներից, երբ Արագածոտնի Վաչուտյանները, Սյունիքի Օրբելյանները, Կոտայքի Պռոշյանները երկրի քայքայված վիճակը վերականգնելու համար հաշտության եզրեր գտան մոնղոլների հետ ու սկսվեց հոգևոր ու աշխարհիկ կառույցների վերականգումն ու կառուցումը: Աշխարհիկ շինություններից մեր ուշադրությանն է արժանացել Հարժիսի քարավանատունը իր պարսկալեզու արձանագրությամբ, որին անդրադարձել ենք հնարավոր վերծանությամբ:

12) XIII դարի վերջերին XIV դարում խեցեգործությունը նշանավորվեց տեխնոլոգիական մի մեծ հեղաշրջումով, որն արտահայտվում էր անոթի խեցատի, ջնարակի բաղադրության նորամուծությամբ: Նպատակ ունենալով էժան հումքով, գուներանգների բազմազանությամբ ու զարդաձևերի հետաքրքիր լուծումներով արժեքներ մատակարարել հասարակությանը, իրականացվում էին տարբեր երկրների աշխատանքային փորձի փոխանակումներ, կազմակերպչական նոր բնույթի աշխատանքներ, որոնք խթանվում էին առևտրի և արհեստի սերտացումով:

13) XIII-XIV դարերում Հայաստանում հախճաասալերի կիրառությունը երևույթ էր: Այն դարձել էր աշխարհիկ և հոգևոր շինությունների ներքին և արտաքին հարդարանքի կարևոր բաղադրիչներից մեկը: Անիում, Գառնիում և Տիկնունիում հայտնաբերված է այդ որակի շինարարական խեցեղենի հարուստ հավաքածուներ, որոնց մի մասը, հավանաբար, տեղական արտադրության արդյունք են: Իրողությունը կարելի է մեկնաբանել իբրև Հայաստանում մոնղոլական լայնարձակ տիրապետության սահմաններում ամփոփված մշակութային այդ արժեքի տեղայնացման փաստով: Այդ դարերում Հայաստանը առևտրա-տնտեսական կապերի մեջ էր Մերձվոլգյան՝ Սարայ Բերգե, Սարայ Բաթու, Թուրքմենիայի Ուրգենչ և Իրանի Թավրիզ քաղաքների հետ: Այդ հարաբերությունների արտահայտություններից մեկը հայկական միջավայրում նկարչական ոճի բազմազան տարբերակներով մշակված ժամանակի շինարարական խեցեղենի՝ հախճաասալ արժեքի թափանցումն էր:

14) Ավարտելով IX-XIV դարերի Հայաստան ներկրված խեցեղենի վերաբերյալ շարադրանքը պետք է արձանագրել, որ տնտեսական կյանքի այդ կարևոր բաղադրիչը կապված էր առևտրական աշխարհի և ճանապարհային քաղաքականության փոփոխվող շրջադարձերի հետ: Այն առարկայորեն վերահաստատեց հայագետներ՝ Յ. Մանանդյանի, Կ. Ղաֆադարյանի, Բ. Առաքելյանի ժամանակին առևտրական ուղիների վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների այժմեականությունը: IX-X դարերում ակտիվ գործել է այդ ճանապարհներից հարավայինը, որ Դվինից հատելով արաբական ամիրությունների տարածքը, հասնում էր Իրաք (Բաղդատ) Ասորիք, ուր գործող ընդարձակ շուկաներում ծավալվում էր ինչպես տեղական այնպես էլ օտար ապրանքի առք ու վաճառքը: Անկասկած, ճանապարհը շարունակող քարավանները հասել են Կենտրոնական Ասիա ու Չինաստան, որի վկայությունն են Դվինում և Անիում հայտնաբերված գտածոները:

Հյուսիսային մայրուղին XII դարում հայ Բագրատունիների ձեռքին էր և Անիին հավասար առևտրական գործակցությունից օգտվում էր Դվինը: Իրանի հետ հաղորդակցությունն ապահովվում էր նաև Դվին-Նախիջևան-Թավրիզ երթուղիով: Վերջին տարիներին Հայաստանի շարքային հուշարձանների պեղումների արդյունքները հավաստում են, որ XIII-XIV դարերում մինչև XVIII դարն այս մայրուղիով առևտրական ակտիվ գործունեություն է ծավալվել Երևանի հետ: Հայաստանի մայրաքաղաքներ՝ Դվին, Անի շարքային բնակավայրեր՝ Գառնի, Եղեգիս, Վարդենուտ և այլն ինչպես և Տիկնունի և Ամբերդ ամրոցներից հայտնաբերված խեցեղենը, որ ամփոփված է ՀԳԹ պահոցներում, քննության ենթարկելով այլ երկրների համապատասխան նյութերով հնարավոր դարձավ ատենախոսության թեման շարադրել և իմաստավորել նորովի:

Ատենախոսության վերաբերյալ հեղինակի կատարված աշխատանքները.

1. **Փորձհամնադի Փ.,** Հայաստանի առևտրա-մշակութային հարաբերությունների պատմությունից (ԺԳ-ԺԴ) դր., «Էջմիածին», 2012, Ը, էջ 64-75:
2. **Փորձհամնադի Փ.,** Դիտողություններ ԺԲ-ԺԴ դարերում Հայաստան ներմուծված մի հավաքածոյի վերաբերյալ, «Էջմիածին», 2013, Զ., էջ 67-74:
3. **Փորձհամնադի Փ.,** XIII-XIV դարերի հայ-իրանական մշակութային հարաբերությունների պատմությունից, Երևան, «Բամբեր հայագիտության», 2014, № 1, էջ 136-147:
4. **Փորձհամնադի Փ.,** IX դարում Հայաստան ներմուծված խեցեղենը, «Բամբեր Երևանի համալսարանի հայագիտություն», 1 (16), Երևան, 2015, էջ 39-53:
5. پریسا پورمحمدی ، آوانویسی و ترجمه و تفسیر و واژه نامه هرمز دیشت، انتشارات زاگرو ، ایلام ، ، صفحه
6. پریسا پورمحمدی، بررسی ماندگاری آثار سرامیک حمام خسرو در محوطه باستانی گارنی ارمنستان، همایش ملی اندیشه ای ماندگار و معماری پایدار دانشگاه جامع علمی کاربردی ایلام ، بهمن ، صفحه -
7. پریسا پورمحمدی ، سفالهای وارداتی ارمنستان در قرون نهم و دهم میلادی، همایش ملی اندیشه های ماندگار و معماری پایدار دانشگاه جامع علمی کاربردی ایلام ، بهمن ، صفحه -

**Привозная керамика Армении
(IX–XIV вв.)**

Резюме

Предметом исследования данной диссертации является экономическая история Армении в рамках привозной керамики. Практика многочисленных научных исследований показывает, что хронологические и локальные особенности керамики, как правило, непосредственно отражают различные изменения, происходящие в социально-культурной и политико-экономической жизни в те или иные исторические периоды. Соответственно данная тема изучена в контексте социальных, политических, экономических, торговых взаимоотношениях Армении с сопредельными странами.

В основе работы лежат богатейшие материалы, добытые в результате многочисленных систематических археологических раскопок из средневековых городов Армении – Двина, Ани, крепостей Амберд, Тикнуни, поселения городского типа Гарни и Егегнадзор и т. д.

Накопившаяся обширная коллекция привозной керамики – простая, глазурованная, фаянсовая – исследована автором в различных контекстах. Здесь приводится полная классификация материала, которая в основе строится с учетом технологической стороны производства.

Привозная керамика в диссертации рассматривается и как одна из разновидностей прикладного искусства, которая отображает большой эстетический вкус средневековых мастеров – ремесленников. Одновременно она позволяет нам увидеть те стороны народной культуры и быта, о которых мы имеем весьма скудные представления. Вопросы, связанные с привозной керамикой в определенной степени были освещены в монографических работах Н.Я. Марра, И.А. Орбели, К.Г. Кафадаряна, Б.Н. Аракеляна, В.А. Абрамян, А.С. Жамкочян, Г.Л. Петросяна и т.д. В этих исследованиях частично использован археологический материал из Двина, Ани, Гарни и сделаны интересные выводы и обобщения.

В представленной работе автором сделана попытка обрисовать картину привозной керамики Армении и выделить особенности его развития. Изучены внешнеторговые связи как в целом, так и в отдельные исторические периоды развития (IX–XI вв., XII–XIII вв., вторая половина XIII–XIV вв.).

Наряду с вышеотмеченными проблемами важное место в работе отводится хронология импортной посуды, для решения которой автором привлечены определенные стратиграфические данные, полученные при археологических раскопках на территории Армении и из сопредельных областей.

Работа состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и приложение в виде каталога фотоснимков.

Коллекция привозной керамики IX – X вв. выявлена из археологических раскопок Двина, который был один из эмиратов данной эпохи под владычеством Саджитов. Здесь большое количество посуды IX–X вв. было зафиксировано при раскопках жилого помещения около Кафедрального Собора в центральном квартале горо-

да. Эти слои датируются арабскими монетами IX–Xвв. и привозной керамикой, которая состоит из простой, глазурированной, фаянсовой, которая была приобретена, торговым магистралем, проходившим через Двин – Маназкерт – Багеш –Амид и идущие далее в Месопотамию и Сирию. О тесных торговых связях свидетельствуют нумизматика IX –Xвв.

При определении производственных центров привозной керамики, рассматривается весь доступный синхронный материал из Ближнего и Дальнего Востока, Центральной Азии. Этим методом выявляются отдельные производственные центры в IX –X вв. в Ираке /Самара, Васит, Куфи/, в Иране /Шош, Нишапур/, в Центральной Азии /Афрасиаб, Чач, Согд, Бухара и т.д./.

Во второй половине XIвека политическое положение Армении ухудшается. Сельджукские нашествия нанесли ощутимый удар хозяйственной жизни Армении. Было приостановлено строительство, нарушились прежние торговые связи с соседними странами, большой упадок переживает вся экономика страны. В конце XII века совместными усилиями армяно-грузинских войск, под руководством Захаридов страна была освобождена от сельджукских захватчиков, после чего создались благоприятные условия для возобновления торговли и возрождения всех отраслей ремесел, в том числе и керамического.

Привозная керамика XII –XIIIвв. изучена материалами добытыми из археологических раскопок Двина и Ани. Она разнообразна по качеству производства и тематическим особенностям.

Изучение богатого материала рассматривается как: а) предмет производства, б) торговый товар и в) предмет искусства.

Керамическая продукция данного периода привозилась из Ирана. Значительные центры производства глазурированной и фаянсовой посуды были Рей, Кашан, Султанабад и т.д. Производство керамики данного периода отличалось высоким качеством, тематическим содержанием. В соответствующей главе приводятся данные из других отраслей искусств – миниатюра, архитектура и т.д.

Во втором половине XIII веке после разрушения Двина монгольскими завоевателями жизнь здесь затухает, чего не скажешь об Ани, Амберд, Тикнуни и Гарни. Привозная керамика и коллекции изразцов могут служить свидетельством продолжений жизни в указанных поселениях городского типа и в городах.

Изучение и классификация всего доступного производственного материала из армянских памятниках данного периода показывает, что такая керамика и типы изразцов относятся к иным производственным центрам – в Иране /Тавриз, Султанабад/, в Туркмении /Ургенч, Золотая Орда, Сарай Бату, Сарай Берге, Ага-Базар/.

Изучение средневековой привозной керамики в современном этапе имеет важное политическое значение, так как настоящая геополитическая реальность диктует новые формы и методы распространения по шелковому пути. Однако эта дорога и ее ветви как всегда остаются основным средством передвижения товаров и перемещения людских потоков. И мы постарались в диссертации, по изучению привозной керамики, показать роль Великого Шелкового пути в истории стран от Китая до Европы. Этот путь был транзитом многих культурных ценностей и сыграл огромную роль в процессе развития мировых цивилизаций. В этом процессе Армения и Иран имели свой внушительный вклад.

**The imported ceramics of Armenia
(IX-XIV centuries)**

Summary

The subject of the present research is one of the spheres of the economic history of Armenia. The thesis is studied in the context of the medieval social political life of the Middle, Far East countries and Central Asia environment. Situated between Far East and Asia Minor, historical Armenia was a buffer in trading relations from the East to West and North to South. So the investigation of the imported ceramics of Armenia provides great possibilities to reveal the real pattern of these relations.

Based on the archaeological data carried out in the medieval sites of Armenia- the cities Dvin, Ani, the fortresses Amberd, Tiknouni, settlement of urban life Garni, the investigation consists of a preface, three chapters, conclusions, list of literature the catalogue of the imported ceramics and graphic designs.

The analysis of the imported pottery of Armenia, due to the Armenian historiography is presented in chronological periods IX-X, XII-XIII and II half of XIII century and XIV centuries.

In the IX-X centuries the political situation of Armenia and the neighboring countries of the Near East thoroughly changed. At the beginning of the 30ies of IX century the Arab Caliphate failed in the political significance, instead of the mighty Iranian dynasties which developed onto new political administrations-emirates. The latter didn't obey the Caliphate, ruled independently and the international trade to the great cities of these emirates was focused. Armenia was also included in the sphere of these trade activities. At the end of the IX century the Arab Caliphs granted the Sadjid emir the title of the governors of Dvin. Despite the earthquake of 894 and the political chaotic circumstances between Byzantine, the Arabs and the Armenian Bagradite rulers to capture the city, the economic and foreign trade developed. This period was known for Armenia as a time of development of the urban life and secular mentality. The cultural and trade relations increased especially with Iraq, Iran, Syria, Egypt, Central Asia (Khorasan, Sogd, Afrasiab etc.).

These countries in all times had great importance on the Silk road as transit way for many cultural values which the ceramics also attribute. Finally the ceramics played an important role in the process of trade between East and West and throughout in the course of time cultural influences from one environment to the other realized.

The collection of the imported pottery of IX-X centuries is mainly from Dvin and was discovered in the ruins of the dwelling complexes destroyed during the earthquake of 894. It is divided into common, glaze and faience types.

The economic and cultural development of Armenia by the Seljuk-turk invasion in the XI century was threatened.

The first half of the XII century the representatives of the Zakarian feudal family played an important role in the political life of Armenia. They became the saviour of the country and the long term peace created favorable conditions for the economic cultural and spiritual development. The trade relations increased specially with Iran. The Imported glazed and faience pottery discovered in the XII-XIII century stratigraphic layers of the cities Dvin, Ani are discussed in detail and concerned as products from Rey, Kashan, Sultanabad, Gurgan and Chinese workshops.

In 1236 started the invasion of the Mongols in Armenia. The economic and trade life declined and people emigrated to foreign countries. But at the 50ies of the XIII century Armenia started to live a new social economic life, which was conditioned by crafts concentrated in prospering big towns and increasing trade relations.

The imported pottery of Armenia in the mongol period II half of XIII, XIV centuries is studied in the thesis considering the ceramics discovered in Garni (settlement of urban life), fortresses Amberd, Tiknoui and settlements at Eghegnadzor.

The investigation in detail characterizes the imported ceramics of the period and also the ceramic tiles, which was a new development in handicraft industry. The contents by immediate trade relations were obtained from Iran (Tavriz), Tourkmenia (Ourkench), Golden hoard (Saray Berke, Saray Baty),. On the ground above mentioned facts the author arrives at a conclusion, that all the countries settled at the Near, Middle and Far East environment and also in Central Asia in the Middle age period had immediate trade and cultural relations and now when new activities are undertaken on the realization of the Silk Road, the analysis of the thesis presents an actual importance, because it testifies the participation of all the countries on the way and Armenia had a great contribution to it.

A handwritten signature in black ink, consisting of a large, stylized initial 'C' followed by several loops and a final vertical stroke.